

Հաստատված է

Տպագրված է 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2003թ-ի փետրվարի 7-ի որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՉԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՒԳԻՍՏՐԻ

ՀՀ Գեղարքունիքի
մարզպետ

Վ. Հակոբյան



Հրատարակման արագության բաժնում
գրանցման թիվ ՍՏ. 2/0. 009/2
"14" 02 2003թ.

07. 02. 2003թ.

Վկայական 03 25 057774
Պետական ռեգիստրի Հրատարակման
արագության բաժնի պետ Ս. Բաղդասարյան
"14" 02 2003թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Լ. ԲԱՆԱԹԱՐԻ ԱՆՎԱՆ
ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ «ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ք. ԳԱՎԱՍ-2003թ.

I. Ըղեանութիւններ

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, մշակութային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:
2. Կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ կառավարության 2002թ.-ի օգոստոսի 1-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» N1411-Ն որոշմամբ և հանդիսանում է «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լևոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական հիմնարկի /գրանցման ծածկագիրը՝ 10008741, վկայական NԲ 000886/ իրավահաջորդը:
3. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության /այսուհետ՝ հիմնադիր/:
4. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գր. Լուսավորչի-2, ինդերս՝ 378630:
6. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը՝ հիմնադրի պարտավորությունների համար:
7. Կազմակերպության անվանումն է՝
 Լրիվ անվանումը՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
 կրճատ անվանումը՝ «Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ
8. Կազմակերպությունն ունի ՀՀ պետական զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք ինչպես նաև կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
9. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և քանկային հաշիվ:
10. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

- 11. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել ՀՀ և օտարերկրյա մշակութային, կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ՝ քաթերական գործի տեսական ու գլխագործնական խնդիրների վերաբերյալ համատեղ ծրագրերի մշակման և իրականացման նպատակով:
- 12. Կազմակերպությունում չեն բույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակները

- 13. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակը և առարկան մշակութային գործունեության իրականացումն է: Մշակութային գործունեությունը մշակութային արժեքների և առարկաների պահպանումը, ստեղծումը, տարածումը, մեկնաբանումը, մշակութային բարիքների՝ ծառայությունների և սրտատրանսքի /ապրանքների/ մատուցումն ու իրացումն է:
- 14. Կազմակերպությունն կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝
 - ա/ ձայներիգների, ձայնասկավառակների քոդարկում և իրացում.
 - բ/ հրատարակչական ու գովազդային գործունեության իրականացում.
 իսկ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով միայն լիցենզիայի հիման վրա:
- 15. Կազմակերպությունն իր գործունեության նպատակներին համապատասխան՝
 - ա/ ապահովում է ազգային և համաշխարհային քառերարվեստի լավագույն ավանդույթների պահպանումն ու զարգացումը.
 - բ/ ապահովում է քառերարվեստի բնագավառում հանդիսատեսի հոգևոր սրահանջների ձևավորումը ու քավարարմը.
 - գ/ կազմակերպում է դասական և ժամանակակից լավագույն դրամատիկական ստեղծագործությունների բեմադրություն.
 - դ/ ինքնուրույն է կազմում իր հիմնական գործունեության ընթացիկ և սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարային ծրագրերը.
 - ե/ ապահովում է կազմակերպությանն ամրացված շենքի պահպանության ու օգտագործմանն անհրաժեշտ սրայնանակարգը /ռեժիմը/, իրականացում է հակահրդեհային անվտանգության միջոցառումներ:

Ե Կազմակերպության սեփականությունը, նրան ամրացված գույքը և ֆինանսատնտեսական գործունեությունը

16. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից:

Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են համընդհանուր նաև ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:

17. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և/կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

18. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

19. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

20. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում սխառվել միայն դատական կարգով:

21. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանը անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

22. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:

23. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

24. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

25. Հիմնադիրը, հիմնադրի կողմից նախատեսված դեպքում լիազորված պետական մարմինն իրավունք ունի ստուգելու կազմակերպությանն ամրացված առարկաների

անբողջականությունն ու պահպանվածությունը դրանց փառասացի սովորության և պետական հաշվառման փաստաթղթերի հետ համեմատության մրջոցով:

- 26. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է սույն կանոնադրությանը նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:
- 27. Կազմակերպության կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են « Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Պետական բյուջեով կազմակերպության համար ուղղակի-որեն, նախատեսված միջոցների սահմաններում կազմակերպության կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ արքյուրից գնումների կատարման ձևով: Կազմակերպության կողմից պետությանը այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն « Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:
- 28. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը⁶ և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:
- 29. Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման /ստույգախի/ լիազորված պետական մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության ստորաբաժանման կողմից:

IV. Կազմակերպության կառավարումը

- 30. Կազմակերպության կառավարումը իրականացնում են հիմնադրի կողմից լիազորված պետական մարմինը՝ ՀՀ Գեղարքունիքի քարտուղար /այսուհետ՝ մարտկախ/, գործադիր մարմինը՝ ամօրեն, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով և զլխավոր ռեժիսորը՝ իրավասությունների տարանջատման հիմքի վրա:
- 31. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
- 32. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են
ա/ կազմակերպության հիմնադրումն,
բ/ կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ. կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և / կամ / ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ. կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում սովորաբար ընդգրկվող կետերը.

ե. կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

զ. կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

է. կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռի հաստատումը.

բ. օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

33. կազմակերպության ընդհանուր կառավարումն իրականացնում է մարզպետը, որին ՀՀ կառավարության

2002թ.-ի օգոստոսի 1-ի N 1411-ն ընդունված 6-րդ կետով վերապահված են նաև «Պետական ոչ առևտրային

կազմակերպության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «Գ», «Դ», «Ե» և «Ը» կետերով /նույնը՝ սույն կանոնադրության 32-րդ կետի «Գ», «Դ», «Ե», «Ը» ենթակետերով/ նախատեսված լիազորությունները:

34. Մարզպետը՝

ա. ապահովում է կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար.

բ. սույն կանոնադրությամբ սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է կազմակերպության տնօրենին.

գ. հաստատում է կազմակերպության տարօրինակ ծախսերի նախահաշիվը.

դ. իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

ե. կատարում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

զ. լուծում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրա գործունեության վերստուգման միջոցները.

է. հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ / ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմը.

բ. վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

բ. վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության օգտագործման նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

ժ/ հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը.

ժա/ իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

35. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում է պաշտոնի և պաշտոնից ազատում է մարզպետը:

Կազմակերպության տնօրենի հետ մարզպետը կնքում է պայմանագիր: Պայմանագրով սահմանվում են կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթները, որոնք պայմանավորվող կողմերը անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չէն կարող հակասել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, քացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

36. Կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով ու կարգադրություններով սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ նրա կողմից լիազորված պետական մարմնի որոշումների ու կարգադրությունների սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

37. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, քացի գիտական, մակկալարժական և ստեղծագործական աշխատանքից:

38. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և / կամ / պետությանը պատճառված վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ սրտաճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

39. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի` ՀՀ օրենսդրությանը` հակասող որոշումները, կարգադրությունները, երամանները, երահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

40. Կազմակերպության տնօրենի քացակայության դեպքում մարզպետի կարգադրության համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է կազմակերպության այլ անձ:

41. Կազմակերպության տնօրենը`

1/ ~~Հանրապետության~~ հանդես է գալիս կազմակերպության անունից,
2/ ~~Հանրապետության~~ է նաև շահերը և կնքում է գործարքներ.

3/ ~~Հանրապետության~~ հիմնադրի և մարզպետի որոշումներով ու կարգադրություններով
և ~~Հանրապետության~~ սահմանված կարգով անօրինում է կազմակերպության
4/ ~~Հանրապետության~~ ֆինանսական միջոցները.

5/ ~~Հանրապետության~~ է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում
6/ ~~Հանրապետության~~ իրավունքով լիազորագրեր.

7/ ~~Հանրապետության~~ է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության
8/ ~~Հանրապետության~~ անդամներին, նրանց նկատմամբ կիրառում է խախտուման միջոցներ
և ~~Հանրապետության~~ կարգապահական տույժեր.

9/ ~~Հանրապետության~~ բացում է հաշվարկային հաշիվներ.

10/ ~~Հանրապետության~~ է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային
11/ ~~Հանրապետության~~ առարկաժամանակների իրավասությունը.

12/ ~~Հանրապետության~~ է սահմանված կարգով լիազորված պետական մարմինն է ներկայացնում
13/ ~~Հանրապետության~~ կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը.

14/ ~~Հանրապետության~~ հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի
15/ ~~Հանրապետության~~ նախահաշիվը

16/ ~~Հանրապետության~~ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների
17/ ~~Հանրապետության~~ սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար
18/ ~~Հանրապետության~~ սրբառադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

19/ ~~Հանրապետության~~ է կազմակերպությանն անժամկետ ու անհատուց օգտագործման
20/ ~~Հանրապետության~~ իրավունքով անբացված շենքերի նախագծային, շինարարական, վերանորոգման և
21/ ~~Հանրապետության~~ այլ աշխատանքներ.

22/ ~~Հանրապետության~~ որոշում է կայացնում կազմակերպության տրանսպորտային միջոցների
23/ ~~Հանրապետության~~ օգտագործման վերաբերյալ.

24/ ~~Հանրապետության~~ ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր.

25/ ~~Հանրապետության~~ իրականացնում է ֆինանսական և արտադրական գործունեությանը վերաբերող այլ
26/ ~~Հանրապետության~~ խնդիրներ.

27/ ~~Հանրապետության~~ հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և ֆինանսական-
28/ ~~Հանրապետության~~ արտադրական գործունեության ծրագիրը.

29/ ~~Հանրապետության~~ լուծում է կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը
30/ ~~Հանրապետության~~ իրավարանական և ֆիզիկական անձանց վարձակալության հանձնելու
31/ ~~Հանրապետության~~ հարցերը.

32/ ~~Հանրապետության~~ որոշում է ընդունում կազմակերպության ֆինանսական միջոցների օգտագործման
33/ ~~Հանրապետության~~ վերաբերյալ.

34/ ~~Հանրապետության~~ մարզպետի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության կառուցվածքը.

աշխատողների քիվը, հաստատում է կազմակերպության ընդունուր և ստանձին կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգադրահական և այլ կանոններ.

Ե՝ կապիտանացում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

42. Կազմակերպության գեղարվեստական գործունեության ղեկավարումը իրականացնում է կազմակերպության գլխավոր ռեժիսորը:

43. Գլխավոր ռեժիսորը՝

ա՝ բաղարկում է նոր և վերականգնվող ներկայացումներ՝ հրապարակային ցուցադրման համար.

բ՝ կառարում է նոր և վերականգնվող ներկայացումների դերաբաշխում.

գ՝ նշանակում է ընթացիկ խաղացանկի ներկայացումների ներմուծվող դերակատարներին.

դ՝ կազմակերպության տնօրենի հաստատման է ներկայացնում ներկայացումների խաղացանկային ծրագրեր.

ե՝ որոշում է հյուրախաղերի վայրերը, ժամկետները, խաղացանկը և մասնակիցների կազմը.

զ՝ ստաջարկություն է ներկայացնում կազմակերպության տնօրենին՝ գեղարվեստական անձնակազմի հետ աշխատանքային պայմանագրեր կնքելու, փոփոխելու և լուծելու, ինչպես նաև աշխատավարձերի վերաբերյալ.

է՝ ստաջարկություն է ներկայացնում կազմակերպության տնօրենին խաղացանկից հանվող ներկայացումների վերաբերյալ.

ը՝ իրականացնում է գեղարվեստական ստեղծագործական գործունեության այլ խնդիրներ:

44. Կազմակերպության գործունեության հիմնական հարցերի քննարկման, ստեղծագործական և կազմակերպական ածխատանքների արդյունավետ իրականացման նպատակով տնօրենին առընթեր ստեղծվում է խորհրդակցական մարմին՝ գեղարվեստական խորհուրդ: Գեղարվեստական խորհուրդն որ գործառույթներն իրականացնում է տնօրենի կողմից հաստատված կանոնակարգի հիման վրա:

Գեղարվեստական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են կազմակերպության գլխավոր ռեժիսորը, տնօրենը, ստեղծագործական անձնակազմի, ինչպես նաև արվեստի կազմակերպության, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Գեղարվեստական խորհրդի կազմը, լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցնելով, հաստատում է կազմակերպության տնօրենը:

Գեղարվեստական խորհուրդն իր իրավասությունների սահմաններում քննարկում է կազմակերպության գործունեությանն առնչվող հարցեր, կազմակերպության ցուցումների տարեկան և ընթացիկ ծրագրերն ու իրանց կատարման կազմակերպություններն:

45. Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, արյն

կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

46. Կազմակերպության լիազորված պետական մարմնի ղեկավարը, կազմակերպության տնօրենը կազմակերպության ամունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն իշահ իրենց կողմից ներկայացվող պետական կազմակերպության:

V. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

47. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

48. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

49. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

50. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

51. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

52. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական քյուզե:

Սույն կանոնադրությունը մշակվել է « ՀՀ քաղաքացիական օրենսգրքի», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հիման վրա, քննարկվել և ընդունվել է կոլեկտիվի ընդհանուր ժողովի 2003թ.-ի հետրվարի 3-ի նիստում:

3

ՀՀ Գեղարքունիքի մարզի **L. Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի**

տնօրեն

Վ. Չարվաղրյան

3